ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«------ »_____ 2023թ. **N----Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի N 253-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» N 253-Ն որոշման հավելվածի 7-րդ կետում «15 անդամից» բառերը փոխարինել «17 անդամից» բառերով, իսկ «3-ը՝ ավագանու անդամներ» բառերը փոխարինել «5-ը՝ ավագանու անդամներ» բառերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-Ի Ն 253-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի «Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի կազմավորման և գործունեության կարգն ու լիազորությունները սահմանելու մասին» N 253-Ն որոշման հավելվածում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է հետևյալով.

«Երևանի քաղաքապետին կից հասարակական կարգով գործող սոցիալական աջակցության տրամադրման խորհրդի» նիստերի արդյունքում աջակցություն է տրամադրվում Երևան համայնքի սոցիալական աջակցության կարիք ունեցող ընտանիքներին: Խորհուրդը պարբերաբար հրավիրում է նիստեր, որի ընթացքում քննարկվում են սոցիալական աջակցության տրամադրման անհատական ծրագրերը և խորհրդի անդամների ձայների քվեարկության արդյունքում որոշվում է աջակցությունների տրամադրման հնարավորությունը:

Կարևորում ենք նշել, որ Կարգի համաձայն խորհուրդը կազմված է 15 անդամից, որից 4-ը՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցներ, 3-ը՝ ավագանու անդամներ, 2-ը՝ միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, 3-ը՝ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ և 3-ը՝ անհատ փորձագետներ:

2020 թվականին գործել է ավագանու 3 խմբակցություն, ուստի յուրաքանչյուր խմբակցությունից ընդգրկվել է 1 ավագանու անդամ, սակայն սույն թվականի սեպտեմբերի 17-ին տեղի ունեցած Երևան քաղաքի ավագանու հերթական ընտրությունների արդյունքում անցողիկ շեմը հաղթահարած խմբակցությունների թիվը կազմում է 5:

Հաշվի առնելով վերոնշյալը և կարևորելով յուրաքանչյուր խմբակցության մասնակցությունը՝ անհրաժեշտություն է առաջացել 3 ավագանու անդամի փոխարեն ընդգրկել 5 ավագանու անդամ, որի արդյունքում յուրաքանչյուր խմբակցությունից կարող է ընդգրկվել 1 ավագանու անդամ:

Ելնելով վերոգրյալից՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ